*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահի Ռ. Քոչարյան
*30 հունվարի 2002 թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2002 թվականի N 78
քաղ. Երևան

## ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՍԿԻԶԲՆ ԸՍՏ ՍԵԶՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել սեզոնային ապրանքների երաշխիքային և ծառայության ժամկետների սկիզբն ըստ սեզոնների՝
ա) սեզոնային ապրանքների գարնանային սեզոն՝ փետրվարի 10.
բ) սեզոնային ապրանքների ամառային սեզոն՝ մայիսի 10.
գ) սեզոնային ապրանքների աշնանային սեզոն՝ օգոստոսի 10.
դ) սեզոնային ապրանքների ձմեռային սեզոն՝ նոյեմբերի 10:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 30-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ — Ա. Մարգարյան